Ավետիք Իսահակյան

Գևորգ Կառվարենցին, 1924թ . , մարտի 22, Վենետիկ

Սիրելի պարոն Գևորգ կառվարենց.
Մեծ շնորհակալությամբ ստացա ձեր գրքույկը՝ «Գերեզմանի ծաղիկներ» որ պատվել էիք ինձ՝ ուղարկելով այն:
Ուշադիր՝ մի-երկու անգամ կարդացի, և թույլ եմ տալիս ինձ իմ համեստ կարծիքը ասելու:
Ձեր տեքնիկը, արվեստը, ձևը շատ լավ է, նուրբ է ու նոր. Հանգերը ավելի քան ճոխ են, և այս առավելությունը հաճախ թերություն է:
Պոեզներիդ մեջ կան հայտ բերած քնքուշ, խորունկ ապրումներ, ոչ այս – աշխարհից:
Եվ կուզենայի, որ ավելի մտերիմ զգայիք Ձեզ կյանքին և նրա գեղեցկություններին, արևին ու լույսին, աղջկան և սիրո լիրիկ վշտերին:
Ուրիշ անգամներ Պոլսի թերթերի մեջ հանդիպել եմ Ձեր անունով՝ ուրիշ ծաղիկներ, ավելի բուրիչ, ինչպես պ. Թեոդիկի տարեցույցի մեջ եղածը. – Վայ մեզ կերտող, վայ մեզ կոտրող բրուտին:
Թող բանաստեղծության Աստվածը Ձեզ ավելի ներշնչումներ տա: Դուք դեռ երիտասարդ եք, և կյանքը Ձեր առջև - չհնձված արտ:

Լավագույն բարևներով,
մնամ Ձեր՝
Ավետիք Իսահակյան